# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
# ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05.03.2019թ.

ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ՀՁ և Հ վարչության պլանավորման և հաշվառման բաժնի պետ, գնդապետ Է. Ղանդիլյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ՁՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Չախալյան,

ՀՀ ԶՈՒ ՀՁ և Հ վարչության պլանավորման և հաշվառման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Պետրոսյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔԾՀ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1.1 «ԻՆՏԵՐԱՎԻԱ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը ներկայացրել է, սակայն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված նմանատիպ պայմանագրի գումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում «ԻՆՏԵՐԱՎԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հեղուկ գազի կամ այլ գազերի մատակարարման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և առաջարկել մասնակցին շտկել տեղ գտած անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 11.03.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԻՆՏԵՐԱՎԻԱ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն: Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ չկիրառել, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Տ. Մաթևոսյան |
| Գնահատող, | Է. Ղանադյան |
| Գնահատող | Ն. Զախալյան |
| Գնահատող | Ա. Պետրոսյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Ամիրյան |